

ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Թբիլիսոբային » մասնակցելու համար Թբիլիսի էին ժամանել քույր քաղաքների պատվիրակությունները: Հյուրերի թվում էր Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը:

Երեւանյան պատվիրակության ղեկավարը Թբիլիսիի քաղաքապետարանում կայացած պաշտոնական հանդիպման շրջանակում, նախ Թբիլիսիի քաղաքապետ Գիգա Ուգուլավային փոխանցեց Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի՝ Թբիլիսիի օրվա առթիվ իր վրացի գործընկերոջն ու թբիլիսցիներին ուղղված շնորհավորական ուղերձը: Այնուհետ հանդիպման շրջանակում Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Կամո Արեյանը եւ Երեւանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Սերգեյ Մակարյանը Թբիլիսիի քաղաքապետի հետ քննարկեցին երկու քաղաքների միջեւ բազմակողմ համագործակցության խթանմանն առնչվող հարցեր: Այդ համատեքստում մասնավորապես քննարկվեցին մունիցիպալ ծառայությունների մատուցման գծով փորձի փոխանակման, զբոսաշրջության, կրթամշակութային, առեւտրատնտեսական հարաբերությունների ընդլայնման եւ այլ հարցեր:

1 / 2

Երեւանի քաղաքապետարանի պատվիրակությունը մասնակցեց նաեւ տոնակատարության կապակցությամբ Թբիլիսի այցելած պատվիրակությունների պաշտոնական ընդունելությանը, որին ներկա է եղել նաեւ Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին:
«Թբիլիսոբային» Երեւանի պատվիրակությանը ցուցաբերած ջերմ ընդունելության համար Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը շնորհակալական ուղերձ է հղել Գիգի Ուգուլավային:
Ուղերձում, մասնավորապես, ասված է. «Հարգելի՛ պարոն քաղաքապետ: Թույլ տվեք շնորհակալություն հայտնել «Թբիլիսոբայի» տոնակատարությանը Երեւանի պատվիրակության ընդունելության եւ հետաքրքիր ծրագրի առթիվ, որն իրականացվեց Թբիլիսիի քաղաքապետարանի աշխատակիցների արհեստավարժության շնորհիվ:
Մենք մեծ նշանակություն ենք տալիս մեր եղբայրական երկու քաղաքների միջեւ բարեկամական եւ երկկողմ օգտավետ համագործակցությանը եւ համոզված ենք, որ փոխայցելությունները կնպաստեն այդ հարաբերությունների խորացմանն ու զարգացմանը:
Օգտվելով առիթից, ցանկանում եմ Ձեզ եւ Թբիլիսիի բնակիչներին մաղթել առողջություն, երջանկություն եւ բարեկեցություն»: